

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2017-3-1-Ա

ք. Երևան

24.05.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի մայիսի 24-ի նիստում քննարկեց 2017 թվականի ապրիլի 27-ին Գագիկ Սուրիկի Ալավերդյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված գյուտի (հայտ AM20160094) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Հայտարկված գյուտը՝ առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն), չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի սահմանված արտոնագրաունակության պայմանին: Հայտարկվող սարքը չի համապատասխանում արտոնագրաունակության՝ գյուտարարական մակարդակ պայմանին, քանի որ, հիմնված է որևէ հայտնի մասով (մասերով) հայտնի միջոցի լրացման վրա, որը (որոնք) միացվում է (են) դրան հայտնի եղանակով, ապահովելով այն տեխնիկական արդյունքի ստացումը, որի նկատմամբ հաստատվում է հատկապես այդ լրացումների ազդեցությունը: Մասնավորապես, ըստ հայտատուի ներկայացված նյութերի, զարթուցիչի մանրամասին՝ միջանկյալ անիվին տրիբի (մանրամոդուլ ատամնանիվ) հետ, տրիբի միջոցով միակցվել են միմյանց հետ տրիբների միջոցով փոխգործակցող միջանկյալ անիվ տրիբի հետ, վայրկյանային անիվ տրիբի հետ և խարսխային անիվ տրիբի հետ: Բացի այդ գյուտը հիմնված է միջոցի (տարր, գործողություն), որևէ մասի բացառման վրա, ինչը հանգեցնում է այդ բացառված մասով պայմանավորված ֆունկցիայի վերացմանը և այդ բացառմամբ ակնկալվող տեխնիկայի արդյունքի ստացմանը: Մասնավորապես, ըստ հայտատուի ներկայացրած նյութերի զարթուցիչի մանրամաս հանդիսացող ճոճանիվային հանգույցը (մեխանիկական ժամացույցներում կամ զարթուցիչներում պտտական շարժումը փոխակերպում է տատանողական կամ հետընթաց-համընթաց շարժման) բացակայում է, առանց որի զարթուցիչի մեխանիզմը անկառավարելի կպտտվի: Ճոճանիվային հանգույցի առկայությունը հնարավորություն է տալիս իր հետ խարսխի երկժանիով կառչման մեջ գտնվող

խարսխային ատամնանիվին կատարել հավասարաչափ պտտական շարժումներ՝ շարժելով ժամանակի հաշվառման մեխանիզմը հաստատուն արագությամբ: Տեխնիկայի մակարդակից ակնհայտ է, որ կախված նրանից, թե ատամնանիվային միացման մեջ ինչպիսի ատամնանիվ է ընտրվում (կախված ատամների քանակից), հնարավոր է ստանալ ելքային լիսեռի ցանկացած արագություն, ուստի հայտատուի այն պնդումը, որ տվյալ լուծմամբ հնարավոր է ստանալ տարբեր արագություններով պտտվող ելքային լիսեռներ, ակնհայտ է և հիմնված է տեխնիկայի հայտնի մակարդակի վրա (<http://www.isopromat.ru/tmm/kratkij-kurs/kinematika-zubchatyh-mehanizmov>):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ այն չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության գյուտարարական մակարդակի պայմանին:

Բողոքարկողը շարունակեց պնդել բողոքը բավարարելու վերաբերյալ իր տեսակետը:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Գագիկ Սուրիկի Ալավերդյանի կողմից ներկայացված գյուտի (հայտ AM20160094) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ